Բաջունայս[1] կը կոչէին Չորրորդ Հայք, Վասպուրական[2] աշխարհը, Գուին, Շիրակ, Տայր[3] եւ Բագրեւանդ՝ Երրորդ Հայք, Ջուրզան[4] Երկրորդ Հայք, Սիսական եւ Աղուանք[5] կը կոչէին Առաջին Հայք։ Իսկ այլք կը պնդեն. որ Աշմուշատ միայն կը կոչէր Չորրորդ Հայք, Կարին, Խլաթ, Արճէշ եւ Բաջունայս՝ Երրորդ Հայք, Սիսական,

---

բերանի (Աղիովիտ գաւ.) Արճէշի մասին է խօսքը։ Անունիս յունական ձեւն է 'Αρσίσσα. Թուի թէ նոյնն է Arzašku, ուրարտացի Արամէի մայրաքաղաքը, որ 858 Թ. Ն. Ք. Սաղմանասար Բ. աւերեց։

1 Դժար է որոշել, որ գաւառի կամ քաղաքի կը վերաբերի աղաւաղած անունս. եթէ ուղղենք կէտադրութիւնն եւ կարդանք باخنيس (Բախունիս) փոխանակ باجنيس, թերեւս կարելի լինէր 'Απαχουνῆς (Ապահունիք) գաւառի անուան այլայլումն այստեղ ենթադրել։

2 بسفرجان (Բասփորրաջան) սակաւ ծանօթ է Արաբաց = βασοροπέδα (Strab.). βασπαρακᾶν (Const. Porphyr.).

3 Բնագրում سراج طير (Սիրաջ Տայր). անկասկած երկու անունն պատելու է միմեանցից եւ ուղղելու՝ سراج وطيز (Շիրակ եւ Ցայոց)։ Արտագրողը طير ընդունած է արաբական բառի տեղ, որ "թռչուն„ կը նշանակէ. سراج طير = թռչունի լապտեր։ Հմմտ. Σιρακηνή (Ptol).

4 جرزان = Վիրք = 'Υρκανοί = (Jos. Fl.) = ܓܘܪܙܢ = Hyrcani (Mela). Բագրեւանդ = Βαργανδαυηνή (Ptol.)

5 أران (Առրան). Աղուանից երկրի սովորական անունն է Արաբաց մօտ, որ պահպանուել է Առան-ռոտ գաւառի անուան մէջ։ Երկրիս սահմանները դժուար է որոշել, որոնք միշտ ենթարկուած են եղել զանազան փոփոխութեանց. ըստ Իստախրի "Աղուանք կը տարածին Բաբ-էլ Աբուաբից (Դերբենտից) մինչեւ Թիֆլիս եւ Նախիջեւան, Արաքս գետի մօտ։„ Հմմտ. οἱ 'Αλβανοί (Jos. Fl.), 'Αριανία (Steph. Byz.), 'Αριανοί (Strab.).